



*Համարը* N 1041-Ն

*Տիպը* Որոշում

*Սկզբնաղբյուրը* Միասնական կայք 2021.06.14-  
2021.06.27 Պաշտոնական  
հրապարակման օրը 25.06.2021

*Ընդունող մարմինը* ՀՀ կառավարություն

*Ստորագրող մարմինը* Վարչապետի պաշտոնակատար

*Վավերացնող մարմինը*

*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 26.06.2021

*Տեսակը* Հիմնական

*Կարգավիճակը* Գործում է

*Ընդունման վայրը* Երևան

*Ընդունման ամսաթիվը* 24.06.2021

*Ստորագրման ամսաթիվը* 24.06.2021

*Վավերացման ամսաթիվը*

*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**+** Կապեր այլ փաստաթղթերի հետ

**+** Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1423-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2021 թվականի N 1041-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1423-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 1343-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1423-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները

1) որոշման 1-ին կետում «10 և 11» բառերը փոխարինել «10, 11 և 12» բառերով.

2) որոշման N 1 հավելվածի վերնագրում «ՏԳՏԴ՝ 10-25, 27, 28, 31-33, 41-ից 43 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ ԵՎ ԵՆԹԱԴԱՍԵՐԸ, 01.13.4, 01.13.5, 01.19.2, 01.41.0, 01.42.0, 01.45.0, 01.46.0, 01.47.0, 01.49.2, 01.49.4, 01.49.9, ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերը փոխարինել «ՏԳՏԴ՝ 01, 10-25, 27, 28, 31-33, 41-43 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ, ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերով.

3) որոշման N 2 հավելվածի վերնագրից հանել «ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԶՆՆՈՒՄ» և «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բառերը, իսկ «ՏԳՏԴ՝ 38, 39, 46, 55, 56, 85, 86, 87, 93, 95, 96 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ ԵՎ ԵՆԹԱԴԱՍԵՐԸ 45.2, 45.4, 58.1, 64.1 ԽՄԲԵՐԸ, 71.20.3, 84.11.284.11.3 ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերը փոխարինել «ՏԳՏԴ՝ 38, 39, 45, 55, 56, 58, 84, 86, 93, 95, 96 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերով.

4) որոշման N 3 հավելվածի վերնագրում «ՏԳՏԴ՝ 35, 36, 37 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ ԵՎ ԵՆԹԱԴԱՍԵՐԸ, 01.61.1, 03.22.1, 03.22.2, 03.22.9 ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերը փոխարինել «ՏԳՏԴ՝ 01, 03, 35, 36, 37 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ, ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերով.

5) որոշման N 4 հավելվածի վերնագրից «ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՏԵՂԱՍՄԱՍԵՐԻՀԱՍԱՐ» բառերից հետո առանձին տողով լրացնել «(ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ)» բառերով, իսկ «ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՏԳՏԴ՝ 07 ՀԱՏՎԱԾԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐ, ԴԱՍԵՐ ԵՎ ԵՆԹԱԴԱՍԵՐ, 08.91.0 ԴԱՍ, 08.99 ԽՈՒՄԲ» բառերը փոխարինել «ՏԳՏԴ՝ 07 ՀԱՏՎԱԾԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ,

ԴԱՍԵՐԸ, ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերով.

6) որոշման N 5 հավելվածի վերնագիրը «ԸՆԴԵՐՔԻ ՓՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ» բառերից հետո առանձին տողով լրացնել (ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ)» բառերով, իսկ «ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՏԳՏԴ՝ 05, 06, 08 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐ, ԴԱՍԵՐ ԵՎ ԵՆԹԱԴԱՍԵՐ» բառերը փոխարինել «ՏԳՏԴ՝ 05, 06, 08 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ, ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերով.

7) որոշման N 6 հավելվածի վերնագրում «(ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ)» բառերը փոխարինել «ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ» բառերով, իսկ «ՏԳՏԴ՝ 09, 36 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐ, ԴԱՍԵՐ ԵՎ ԵՆԹԱԴԱՍԵՐ, 11.07 ԽՈՒՄԲ, 11.07.1, 23.99.0 ԴԱՍԵՐ» բառերը փոխարինել «ՏԳՏԴ՝ 09, 11, 36 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ, ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերով.

8) որոշման N 7 հավելվածի վերնագրում «ՏԳՏԴ՝ 07, 09 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐ, ԴԱՍԵՐ ԵՎ ԵՆԹԱԴԱՍԵՐ, 08.91.0 ԴԱՍ, 08.99 ԽՈՒՄԲ» բառերը փոխարինել «ՏԳՏԴ՝ 07, 08, 09 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ, ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերով.

9) որոշման N 8 հավելվածի վերնագրում «ԽՄԲԵՐ, ԴԱՍԵՐ ԵՎ ԵՆԹԱԴԱՍԵՐ» բառերը փոխարինել «ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ ԵՎ ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերով.

10) որոշման N 9 հավելվածի վերնագրում «ՏԳՏԴ՝ 09, 36 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐ, ԴԱՍԵՐ ԵՎ ԵՆԹԱԴԱՍԵՐ, 11.07 ԽՈՒՄԲ, 11.07.1, 23.99.0 ԴԱՍԵՐ» բառերը փոխարինել «ՏԳՏԴ՝ 09, 11, 36 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ, ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերով.

11) որոշման N 10 հավելվածի վերնագիրը «ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N » բառերից հետո առանձին տողով լրացնել «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» բառերով, իսկ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ՏԳՏԴ՝ 01.1, 01.2, 01.3, 01.4, 02, 03.2 ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ (ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ 03.22.1, 03.22.2 ԵՎ 03.22.9 ԵՆԹԱԴԱՍԵՐԻ» բառերը փոխարինել «ՏԳՏԴ՝ 01, 02, 03 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ, ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերով.

12) որոշման N 11 հավելվածի վերնագրում «ՏԳՏԴ՝ 02, 03, 36, 37, 41, 42, 43, 55, 91.04, 91.04.1, 91.04.2 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ ԵՎ ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերը փոխարինել «ՏԳՏԴ՝ 02, 03, 36, 37, 41, 42, 43, 55, 91 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ, ԵՆԹԱԴԱՍԵՐԸ» բառերով.

13) որոշումը լրացնել նոր՝ N 12 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետի պաշտոնակատար**

**Ն. Փաշինյան**

Երևան

24.06.2021  
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Հավելված  
ՀՀ կառավարության 2021 թվականի  
հունիսի 24-ի N 1041-Ն որոշման**

**«Հավելված N 12  
ՀՀ կառավարության 2019 թվականի  
հոկտեմբերի 10-ի N 1423-Ն որոշման**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

ՄՏՈՒԳԱԹԵՐԹ N-----

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (ՏԳՏԴ 01, 91 և 93 ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԲՈՒՈՐ ԽՄԲԵՐԸ, ԴԱՍԵՐԸ, ԵՆԹԱԴԱՍԵՐԸ)

\_\_\_\_\_ 20\_\_ թ.

Մտուգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի \_\_\_\_\_ թվականի N \_\_\_\_\_ հանձնարարագրի հիման վրա:

Մտուգումն իրականացնող պաշտոնատար անձինք՝

_____ (պաշտոնը)	_____ (անունը, հայրանունը, ազգանունը)
_____ (պաշտոնը)	_____ (անունը, հայրանունը, ազգանունը)
_____ (պաշտոնը)	_____ (անունը, հայրանունը, ազգանունը)
_____ (պաշտոնը)	_____ (անունը, հայրանունը, ազգանունը)
_____ (պաշտոնը)	_____ (անունը, հայրանունը, ազգանունը)

Մտուգման ժամկետը՝ \_\_\_\_\_ աշխատանքային օր  
Մտուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը՝ \_\_\_\_\_ թ.  
Մտուգման սկիզբը՝ \_\_\_\_\_ ավարտը՝ \_\_\_\_\_ թ.

Հանձնարարագրում նշված ստուգաթերթի հարցերը՝ \_\_\_\_\_

Մտուգվող սուբյեկտի՝ \_\_\_\_\_  
Անվանումը/անունը, ազգանունը՝ \_\_\_\_\_

ՀՎՀՀ-ն՝ \_\_\_\_\_

Գտնվելու վայրը՝ \_\_\_\_\_  
Գործունեության/բնակության վայրի հասցեն՝ \_\_\_\_\_  
Հեռախոսահամարը՝ \_\_\_\_\_  
Այլ տեղեկություններ՝ \_\_\_\_\_

Տեղեկատվական բնույթի հարցեր		
NN ը/կ	Հարցը	Պատասխանը
1.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն), այդ թվում՝ հեռախոսահամարը և այլ կապի միջոցներ	
2.	Տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեությունը սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
3.	Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը և այլ կապի միջոցներ	

NN ը/կ	Հարցը	Հարցի պատասխանը			Գշիռը	Իրավական հիմքը	Մեկնա- բանությունը	Ստուգման եղանակը
		այո	ոչ	չ/պ				
1.	Սոցիալական նպատակով կենդանական աշխարհի օբյեկտների (պաշարների) օգտագործումը կատարվել է՝					«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդված, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 10-ի N 884-Ն որոշման N 1 հավելվածի 17-րդ կետ		Վաստաթղթային կամ տեսագնում
	1) օրենսդրությամբ սահմանված վճարի դիմաց				0,6			
	2) պայմանագրի առկայությամբ				0,8			
	3) պայմանագրում նշված պայմանների պահպանմամբ				0,6			
2.	Գյուղատնտեսական և արդյունագործական նպատակով կենդանական աշխարհի օբյեկտների (պաշարների) օգտագործումը կատարվել է՝					«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդված,		Վաստաթղթային կամ տեսագնում
	1) օրենսդրությամբ սահմանված վճարի դիմաց				0,6			
	2) պայմանագրի առկայությամբ				0,8			
	3) պայմանագրում նշված պայմանների պահպանմամբ				0,6			
3.	Վայրի կենդանիների, կենդանաբանական հավաքածուների և առանձին նմուշների ներմուծումն իրականացվել է՝					«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 18-ի N 1174-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետ		Վաստաթղթային կամ տեսագնում
	1) լիազորված մարմնի թույլտվության առկայությամբ				0,5			
	2) լիազորված մարմնի թույլտվությամբ սահմանած կետերի հիման վրա				1,5			

<p>4. Վայրի կենդանիների, կենդանաբանական հավաքածուների և առանձին նմուշների արտահանումը բացառությամբ գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով օգտագործման տրամադրված վայրի կենդանիների արտահանման, իրականացվել է՝</p>					<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 18-ի N 1174-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետ</p>		<p>փաստաթղթային կամ տեսագնում</p>
<p>1) լիազորված մարմնի թույլտվության առկայությամբ</p>				0,5			
<p>2) լիազորված մարմնի թույլտվությամբ սահմանած կետերի հիման վրա</p>				1,5			
<p>5. «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված վայրի կենդանիների, դրանց մասերի, ածանցյալների արտահանումը իրականացվել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված թույլտվության (հավաստագրի) առկայությամբ</p>				2	<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մաս, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետ</p>		<p>փաստաթղթային</p>

6.	<p>«Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված վայրի կենդանիների, դրանց մասերի, ածանցյալների ներմուծումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված թույլտվության (հավաստագրի) ստկայությամբ</p>				2	<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մաս, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետ</p>		փաստաթղթային
7.	<p>Վայրի կենդանիների պահումն անազատ պայմաններում կամ վերաբնակեցումն ազատ պայմաններում իրականացվել է լիազոր մարմնի թույլտվությամբ</p>				2	<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդված, 2-րդ պարբերություն</p>		փաստաթղթային կամ տեսազննում
8.	<p>Կենդանիների քանակի կարգավորումը կատարվել է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ տվյալ կենդանու տեսակի համար սահմանված տեսակի քանակը կարգավորող միջոցառումների համաձայն</p>				1,5	<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդված, «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 123-Ն որոշում</p>		փաստաթղթային կամ տեսազննում
9.	<p>Կենդանական աշխարհի ուսումնասիրությունն իրականացվել է՝</p>					<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք 10-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետ և 11-րդ հոդված</p>		փաստաթղթային կամ տեսազննում

	<p>Լիազորված մարմնի կողմից ձևավորած և տեղադրված պետական պատվերով կամ լիազորված մարմնի համաձայնությամբ՝ կենդանական աշխարհի օբյեկտներն օգտագործողների պատվերով</p>				1		
	<p>նախատեսված օբյեկտի կողմից</p>				1		
10.	<p>Անագատ և կիսաագատ պայմաններում վայրի կենդանիները պահվել են այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են դրանց կենսաբանական, անհատական և տեսակային առանձնահատկությունները, առողջությունը և կյանքի անվտանգությունը, ինչպես նաև բացառում են պահելու վայրից կենդանիների փախուստը</p>				4,5	<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 1-ին մաս</p>	<p>փաստաթղթային կամ տեսազննում</p>
11.	<p>Անագատ և կիսաագատ պայմաններում պահվող վայրի կենդանիները համարակալված օղակավորվել են</p>				0,5	<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 1-ին մաս</p>	<p>տեսազննում</p>
12.	<p>Անագատ և կիսաագատ պայմաններում վայրի կենդանիները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիները, պահվել են նախատեսված տարածքներում և տեղերում</p>				1,5	<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 3-րդ մաս</p>	<p>փաստաթղթային կամ տեսազննում</p>
13.	<p>Կենդանական աշխարհին վնաս հասցնող պարարտանյութեր կամ թունանյութեր չեն օգտագործվել</p>				2	<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի «բ» կետ</p>	<p>փաստաթղթային կամ լաբորատոր փորձաքննություն</p>
14.	<p>Կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացվող ձևափոխված նոր կենդանի օրգանիզմների չեն օգտագործել</p>				2	<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի «գ» կետ</p>	<p>փաստաթղթային կամ տեսազննում կամ լաբորատոր փորձաքննություն</p>

15.	<p>Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ կիսաազատ պայմաններում պահելու և օգտագործելու թույլտվություն ունեցողներն այդ կենդանիներին օգտագործել են որսի կամ սննդի կամ այլ նպատակներով՝</p>				1,5	<p>«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր</p>		
	1) սկսած երկրորդ կենսունակ սերնդից				1,5			
	2) լիազոր մարմնի կողմից տրված թույլտվությամբ սահմանված չափաքանակներով				1,5			
16.	<p>Որսի օգտատերն իրականացրել է որսահանդակների գնահատում և կենդանիների հաշվառում</p>				2	<p>«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ</p>		փաստաթղթային կամ տեսագնում
17.	<p>Որսը կազմակերպվել է նախատեսված փաստաթղթերի առկայությամբ</p>				2	<p>«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդված</p>		փաստաթղթային
18.	<p>Որսի ընթացքում չեն օգտագործվել որսի կանոններով չնախատեսված որսագործիքներ</p>				3	<p>«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21.1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2009 թվականի հունվարի 15-ի N 9-Ն որոշման հավելվածի 15-րդ կետ</p>		տեսագնում



19.	Կենսապաշարների օգտագործման համար վճարի հաշվարկը հավաստի է (սահմանված ծավալներ, դրույքաչափեր) և իրականացվել է ըստ նախատեսված կարգի			1,5	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 10-րդ բաժնի 219-րդ հոդվածի 4-րդ մաս		փաստաթղթային
20.	Որսի օգտատիրոջ կողմից՝ 1) որսահանդակն օգտագործվել է ըստ նպատակի՝ համաձայն պայմանագրի 2) կատարվել են պայմանագրի և թույլտվության մեջ նշված պարտականությունները 3) ժամանակին իրականացվել են օրենքով սահմանված վճարները			0,6 0,8 0,6	«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետեր		փաստաթղթային կամ տեսազննում
21.	Որսի օգտատիրոջ կողմից տարածքի որսորդական կենդանիներն օգտագործվել են՝ համաձայն թույլտվության մեջ սահմանված տեսակների, քանակների և ժամկետների			3	«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ		փաստաթղթային կամ տեսազննում
22.	Որսի օգտատիրոջ կողմից որսորդին տրված որսի կենդանիների օգտագործման կարճաժամկետ թույլտվությունները տրվել են որսի հատուկ թույլտվություն չպահանջող կենդանիների տեսակների որսի համար՝ կոնկրետ վայրում և ժամանակահատվածում			3	«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ		փաստաթղթային
23.	Որսի օգտատիրոջ կողմից որսորդին տրված որսի կենդանիների օգտագործման անվանական թույլտվությունների տրամադրումը համաձայնեցվել է լիազոր մարմնի հետ և տրամադրվել է կոնկրետ վայրում և ժամանակահատվածում որս իրականացնելու համար			2,5	«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ		փաստաթղթային

»:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետի աշխատակազմի  
ղեկավար

**Ա. Թորոսյան**

24.06.2021  
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 25 հունիսի 2021 թվական: